

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«Արդշինհնվեստբանկ» ՓԲԸ խորհրդի
«02» ապրիլի 2010թ.
թիվ 40 L որոշմամբ

Խորհրդի նախագահ՝

Կ. ՍԱՖԱՐՅԱՆ _____



«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



1. ՆՊԱՏԱԿԸ

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ հաշվապահական հաշվառման քաղաքականության նպատակն է սահմանել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական նպատակը, կանոնները և հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառումն ըստ առանձին բնագավառների:

2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն քաղաքականությունը կիրառվում է Բանկի կենտրոնական հաշվապահության և մասնաճյուղերի հաշվապահությունների կողմից:

3. ԱՌՆՉՎՈՂ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

- ISO 9001:2000:

4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

«Բանկ»՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ:

5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

7. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

7.1. Ընդհանուր դրույթներ

7.1.1. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունն իր մեջ ներառում է այն կոնկրետ սկզբունքները, հիմունքները, կանոնները, եղանակները, ձևերը և ընթացակարգերը, որոնք Բանկն ընտրում է իր հաշվապահական հաշվառումը վարելու, ֆինանսական հաշվետվությունները կազմելու և ներկայացնելու համար:

7.1.2. Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է՝ համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառմանը վերաբերվող այլ օրենքների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերի:

7.2. Քաղաքականության հիմնական նպատակները

7.2.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական նպատակներն են՝

7.2.1.1. սահմանել հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների կիրառման հիմնական կանոնները,

7.2.1.2. ճշգրիտ և արժանահավատ ներկայացնել Բանկի ֆինանսական վիճակը, ինչպես նաև գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունները:

7.3. Քաղաքականության հիմնական կանոնները

7.3.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական կանոններն են՝

7.3.1.1. Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է ՀՀ արժույթով՝ հայկական դրամով,

7.3.1.2. Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է կրկնակի գրանցման եղանակով՝ ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանին և հաշվային պլանի կիրառման հրահանգին համապատասխան,

7.3.1.3. Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է անընդհատ՝ Բանկի պետական գրանցման պահից մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը,

7.3.1.4. Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները պետք է համապատասխանեն միմյանց,

7.3.1.5. Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարումը: Սկզբնական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, սահմանված կարգով և ժամկետներում հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու համար դրանց փոխանցման պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը կազմող և ստորագրող անձինք, Բանկի ներքին կանոնակարգերին համապատասխան:

7.4. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ըստ առանձին բնագավառների

7.4.1. Կանխիկ դրամական միջոցներ.

7.4.1.1. Բանկի կանխիկ դրամական միջոցների փաստացի ներհոսքի և կամ արտահոսքի ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով՝ Բանկի կողմից ընդունված դրամարկղային գործառնությունները կարգավորող իրավական ակտերի համաձայն՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված և պատշաճ կերպով կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

7.4.2. Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ.

7.4.2.1. Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ հաշիվներում հաշվառումը վարվում է ձեռքբերման արժեքով, այնուհետև կատարվում է վերագնահատում իրական արժեքի հիման վրա՝ վերջինիս փոփոխության դեպքում:

7.4.3. Ֆինանսական ակտիվների ճանաչման ամսաթիվը.

7.4.3.1. Ֆինանսական ակտիվները հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում են՝ հիմք ընդունելով իրականացված վերջնահաշվարկի ամսաթիվը: Այսինքն, ֆինանսական ակտիվը հաշվեկշռում ճանաչվում կամ հաշվեկշռից դուրս է գրվում, երբ դրա նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է:

7.4.4. Ներդրումներ արժեթղթերում.

7.4.4.1. Արժեթղթերում կատարվող ներդրումներն ըստ նպատակայնության բաժանվում են երեք խմբի՝
ա) առևտրային նպատակներով պահվող արժեթղթեր,
բ) վաճառքի համար մատչելի արժեթղթեր,
գ) մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր:

7.4.4.2. Առևտրային նպատակներով պահվող ներդրումները Բանկը պահում է հիմնականում գների կամ դիվերսիային հավելագրերի կարճաժամկետ տատանումներից եկամուտ ստանալու նպատակով:

7.4.4.3. Վաճառքի համար մատչելի ներդրումներն այն ներդրումներն են, որոնք Բանկը չի պահում մինչև մարման ժամկետը և որոնք չեն հանդիսանում Բանկի կողմից տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

7.4.4.4. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներն այն ֆիքսված վճարումներով կամ ֆիքսված մարման ժամկետ ունեցող ներդրումներն են, որոնք Բանկը պահում է մինչև մարման ժամկետը և որոնք Բանկի կողմից տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր չեն հանդիսանում:

7.4.4.5. Առևտրային նպատակներով պահվող ներդրումների նախնական գրանցումը կատարվում է ձեռքբերման (սկզբնական) արժեքով, իսկ, այնուհետև, իրական արժեքով: Իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխության դեպքում կատարվում է ներդրումների վերագնահատում: Բանկն իր «ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվությունում արտացոլում է առևտրային նպատակներով պահվող արժեթղթերի վերագնահատման արդյունքները:

7.4.4.6. Վաճառքի համար մատչելի արժեթղթերի նախնական գրանցումը կատարվում է ձեռք բերման (սկզբնական) արժեքով, իսկ այնուհետև իրական արժեքով: Իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխության դեպքում կատարվում է վերագնահատում: Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման արդյունքները Բանկը արտացոլում է «Վերագնահատման պահուստներ» հաշվում:

7.4.4.7. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գրանցումը կատարվում է ձեռքբերման (սկզբնական) արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եթե մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ձեռք են բերվել կամ զեղչատկոսով կամ հավելավճարով, ապա անվանական արժեքի և ձեռքբերման գնի տարբերություններն ամորտիզացվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

7.4.4.8. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի «ա» ենթակետի և «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգի» համաձայն՝ Բանկը ձևավորում է ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստ:

7.4.5. Տրամադրված վարկեր և դեբիտորական պարտքեր.

7.4.5.1. Վարկերը և դեբիտորական պարտքերը՝ ֆիքսված կամ որոշակի պարբերական վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

7.4.5.2. Վարկերի տրամադրման, վարկերի և տոկոսների մարման, ակտիվների արժեզրկման (այդ թվում նաև ներելը կամ զիջելը) գործառնությունները կատարվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, այլ իրավական ակտերի, Բանկի ներքին իրավական ակտերի, Խորհրդի և Վարչության որոշումների, Վարչության նախագահի հրամանների համաձայն:

7.4.5.3. «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի պահանջները իրականացնելու համար Բանկը կատարում է վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգում և հնարավոր կորուստների

պահուստների ձևավորում՝ համաձայն «Բանկի համակարգում վարկերի, դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»: Ընդ որում պահուստը ձևավորվում և ճշգրտվում է յուրաքանչյուր բանկային օրվա կտրվածքով:

7.4.5.4. Հաշվեկշռից ակտիվները դուրս գրելուց հետո հետհաշվեկշռում դրանք ենթակա են հաշվառման:

7.4.6. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ.

7.4.6.1. Բանկը հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ հավանական է, որ

ա) այդ ակտիվներին վերագրելի տնտեսական օգուտները կհոսեն դեպի Բանկ, և

բ) այդ ակտիվներն ունեն արժեք, որը կարող է արժանահավատորեն չափվել:

7.4.6.2. Բանկը հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները հաշվեկշռում ճանաչում է իրենց սկզբնական արժեքներով (ինքնարժեքներով): Ակտիվների ինքնարժեքները ընդգրկում են այդ ակտիվների ձեռքբերման գները, ներկրման տուրքերը, հարկերը, տեղակայման հետ կապված ծախսերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն Բանկին վերադարձման, ինչպես նաև ակտիվները իրենց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախսումները:

7.4.6.3. Հիմնական միջոցները (ոչ նյութական ակտիվները) վերագրվում են ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանով և հաշվային պլանի կիրառման հրահանգով սահմանված այս կամ այն դասին (հող, շենքեր, շինություններ, գույք և գրասենյակային սարքավորումներ, կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա, փոխադրամիջոցներ, այլ հիմնական միջոցներ և այլն)՝ ելնելով տվյալ հիմնական միջոցի օգտագործման նշանակությունից և նպատակից:

7.4.6.4. Բանկը պարբերաբար՝ օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով կատարում է իր շենքերի և շինությունների վերազնահատում:

7.4.6.5. Բանկը հիմնական միջոցների և (կամ) ոչ նյութական ակտիվների վերազնահատում իրականացնում է իր կողմից պատվիրակված և համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտացված անկախ գնահատողի կողմից՝

ա) այն հիմնական միջոցների և (կամ) ոչ նյութական ակտիվների դեպքում, որոնց գնահատումը պահանջում է առանձնահատուկ գիտելիքների և մոտեցումների անհրաժեշտություն և Բանկը դրանք ինքնուրույնաբար չի կարող իրականացնել,

բ) այն հիմնական միջոցների և (կամ) ոչ նյութական ակտիվների դեպքում, որոնց գնահատումն օրենքով սահմանված կարգով պետք է իրականացվի համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների (անձանց) կողմից:

7.4.6.6. Սույն քաղաքականության **Error! Reference source not found.**5 ենթակետի ա) և բ) թվարկումներով նախատեսված հիմնական միջոցներից և (կամ) ոչ նյութական ակտիվներից բացի մնացած հիմնական միջոցների և (կամ) ոչ նյութական ակտիվների վերազնահատումն իրականացվում է Բանկում ստեղծված համապատասխան հանձնաժողովի կամ մասնագիտացված անկախ գնահատողի կողմից:

7.4.6.7. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերազնահատում Բանկը կատարում է նաև դրանց շուկայական արժեքի էական փոփոխության դեպքում՝ համաձայն «Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերազնահատման կարգ»-ի (OD 63-05):

7.4.6.8. Վերազնահատումից առաջացած չիրացված շահույթը հաշվեկշռային արժեքը գերազանցող գումարի չափով հաշվառվում է «Վերազնահատման պահուստներ» հաշվով:

7.4.6.9. Բանկի հիմնական միջոցներում կապիտալ ներդրումների գծով ձևավորված ակտիվները, ինչպես նաև շահագործումից դուրս հիմնական միջոցները չեն ամորտիզացվում:

7.4.6.10. Հիմնական միջոցների վրա կատարված հետագա ծախսումները ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին, եթե դրանք կատարվում են ապագա տնտեսական օգուտները վերականգնելու կամ պահպանելու նպատակով: Բանկը հիմնական միջոցների վրա կատարված հետագա ծախսումներն ավելացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքին այն դեպքում, երբ դրանք բարելավում են ակտիվի վիճակը՝ ապահովելով ապագա տնտեսական օգուտների ավելի մեծ ներհոսք, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում:

7.4.6.11. Ֆինանսական հաշվետվությունում արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու և հարկվող շահույթը որոշելու նպատակով՝ Բանկը կատարում է հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա՝ կիրառելով գծային մեթոդը:

7.4.6.12. Բանկը հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան կատարում է հետևյալ սահմանված ժամկետներում.

- ա) շենքեր, շինություններ և փոխանցվող հարմարանքներ՝ 20 տարի,
- բ) հաշվողական և համակարգչային տեխնիկա՝ 1 տարի,
- գ) այլ հիմնական միջոցներ՝ 5 տարի,
- դ) մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ՝ 1 տարի,
- ե) ոչ նյութական ակտիվներ՝ 10 տարի:

7.4.6.13. Հողի համար մաշվածություն չի հաշվարկվում:

7.4.6.14. Բանկի հիմնական միջոցներում կապիտալ ներդրումների գծով ձևավորված ակտիվները, ինչպես նաև շահագործումից դուրս հիմնական միջոցները չեն ամորտիզացվում:

7.4.6.15. Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում, իսկ դրա որոշման անհնարինության դեպքում՝ 10 տարում:

7.4.6.16. Բանկը կարող է իրացնել գործունեության համար ոչ անհրաժեշտ, հետագա օգտագործման համար ոչ պիտանի, տնտեսապես անարդյունավետ հիմնական միջոցներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4.6.17. Հիմնական միջոցների դուրս գրումը կամ իրացումը իրականացվում է Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

7.4.6.18. Հիմնական միջոցի դուրս գրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

7.4.6.19. Լուծարման նպատակով դուրս գրման ենթակա հիմնական միջոցները դրանք ոչ պիտանի ակտիվներն են՝

ա) որոնք հետագա շահագործման համար ոչ պիտանի են դարձել լրիվ ֆիզիկական մաշվածության, վթարների, տարերային աղետների, շահագործման նորմալ պայմանների խախտման հետևանքով և այլ մնանատիպ պատճառներով,

բ) որոնց հետագա օգտագործումը տնտեսապես ոչ նպատակահարմար է, իրացումը՝ անհնար:

7.4.6.20. Հիմնական միջոցների լրիվ կամ մասնակի լուծարման դեպքում կազմվում է հիմնական միջոցների դուրսգրման ակտ, որը հաստատվում է Բանկի վարչության նախագահի կողմից և որը հիմք է հանդիսանում դուրսգրման արդյունքում առաջացած պահեստամասերի, նյութերի, ջարդոնի և այլ պիտանի մասերի պահեստ մուտքագրման համար:

7.4.6.21. Մինչև յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտը Բանկը կատարում է հիմնական միջոցների գույքագրում: Գույքագրումն իրականացվում է օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

7.4.7. Արագամաշ առարկաներ.

7.4.7.1. Արագամաշ առարկաներին վերաբերում են այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին՝ անկախ դրանց արժեքից: Այդ ակտիվների թվին են դասվում՝ պահեստամասերը, սպասարկող սարքավորումները, գործիքները և հարմարանքները, արտադրական և տնտեսական գույքը, հատուկ հագուստը:

7.4.7.2. Արագամաշ առարկաների արժեքը դուրս է գրվում ծախսերի համապատասխան հաշիվներին վերջիններիս շահագործման հանձնելու պահին՝ կիրառելով ՖԻՖՈ մեթոդը (առաջինը մուտք, առաջինը ելք):

7.4.8. Վարձակալություն.

7.4.8.1. Ֆինանսական վարձակալությունը՝ վարձակալության տեսակ է, որի դեպքում վարձակալին են փոխանցվում վարձակալված հիմնական միջոցի սեփականության իրավունքի հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Սեփականության իրավունքը, ընդհանուր առմամբ, կարող է փոխանցվել կամ չփոխանցվել:

7.4.8.2. Գործառնական վարձակալությունը՝ ֆինանսական վարձակալություն չհանդիսացող վարձակալություն է:

7.4.8.3. Ֆինանսական վարձակալության ժամանակ, եթե Բանկը հանդիսանում է վարձակալ, ապա վարձակալված հիմնական միջոցը Բանկը ճանաչում է իր հաշվեկշռում՝ վերջինիս իրական արժեքով:

7.4.8.4. Ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալված հիմնական միջոցի մաշվածությունը հաշվարկում է Բանկը և համապատասխան ծախսը ճանաչում է իր հաշվեկշռում: Վարձակալված

հիմնական միջոցի մաշվածությունը հաշվարկվում է սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման սկզբունքով:

7.4.8.5. Եթե Բանկը ֆինանսական վարձակալության ժամանակ հանդիսանում է վարձատու, ապա վարձակալությամբ տրամադրված ակտիվը դուրս է գրում իր հաշվեկշռից հաշվեկշռային արժեքով: Բանկը հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի դրական տարբերությունը ճանաչում է որպես հիմնական միջոցի վաճառքից ստացված օգուտ, իսկ իրական արժեքի և նվազագույն վարձավճարների տարբերությունը՝ ֆինանսական վարձակալությունից չճանաչված տոկոսային եկամուտ և ճանաչում է որպես դեբիտորական պարտք:

7.4.9. Հաշվարկներ բանկի և մասնաճյուղերի միջև.

7.4.9.1. Բանկի գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի միջև հաշվեկշիռների համադրման նպատակով, ինչպես նաև հետագա վերահսկողության համար, մասնաճյուղերը յուրաքանչյուր աշխատանքային օրվա հաշվեկշիռը Բանկի «Lotus Notes» էլեկտրոնային համակարգով (էլեկտրոնային կապի այլ միջոցներով, մագնիսական կրիչներով) ուղարկում են Բանկի գլխավոր գրասենյակ:

7.4.9.2. Բանկի՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա ամփոփ հաշվեկշիռը կազմելիս «Հաշվարկներ Բանկի և իր ռեզիդենտ մասնաճյուղերի միջև» հաշիվները գրոյացվում են:

7.4.10. Արտարժույթային փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները.

7.4.10.1. Բանկն իրականացնում է ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով արտահայտված գործառնություններ: Բանկը, օրենքով սահմանված կարգով, հաշվապահական հաշվառումը վարում և ֆինանսական հաշվետվությունները կազմում և ներկայացնում է ՀՀ արժույթով, որն էլ հանդիսանում է հաշվետվական արժույթ:

7.4.10.2. Արտարժույթով արտահայտված գործառնությունները Բանկը սկզբնապես գրանցում է հաշվետվական արժույթով՝ կիրառելով գործարքի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ արտարժույթի միջին փոխարժեքը:

7.4.10.3. Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքների տատանումներից, Բանկը ճանաչում է որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջացել են:

7.4.11. Եկամուտներ և ծախսեր.

7.4.11.1. Հաշվեգրման սկզբունքի համաձայն՝ Բանկը կատարում է հաշվեգրում, ինչպես եկամուտների և ծախսերի, այնպես էլ աճնակազմի գծով ստանձնած իր պարտավորությունների դիմաց, ինչպես նաև երաշխիքային հիմնադրամին և այլ վճարվելիք գումարների մասով:

7.4.12. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր.

7.4.12.1. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերը այն բարենպաստ և ոչ բարենպաստ դեպքերն են, որոնք տեղի են ունենում հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում են օրենսդրությամբ սահմանված մարմիններին ներկայացնելու համար:

7.4.12.2. Բանկը կատարում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող այն դեպքերի ճշգրտում, որոնք հաստատում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող իրավիճակները:

7.4.12.3. Վերոնշյալ դեպքերը Բանկը ճշգրտում է մինչև ֆինանսական հաշվետվությունները բաժնետերերի ժողովին ներկայացնելը:


7.4.12.4. Բանկը կատարում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերի ճշգրտում միայն այն ժամանակ, երբ այդ դեպքերի գումարները կազմում են կապիտալի մեկ և ավելի տոկոսը:

7.4.12.5. Ելնելով ֆինանսական հաշվետվություններում արժանահավատ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունից՝ Բանկը կարող է փոխել սույն քաղաքականության **7.4.12.4.** կետով սահմանված տոկոսը:

7.4.12.6. Եթե ճշգրտման ենթակա դեպքերը ի հայտ են եկել տարեկան ֆինանսական հաշվետվությունները Բանկի բաժնետերերի ժողովին ներկայացնելուց և վերջինիս կողմից հաստատվելուց հետո, ապա նման դեպքերում ճշգրտումներ չեն կատարվում և Բանկը համարում է, որ նման տեղեկատվության վերաներկայացումն անիրագործելի է:

7.4.13. Էական սխալների ճշգրտում.

7.4.13.1. Բանկը նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ճշգրտում է կատարում միայն այն սխալների դեպքերում, եթե դրանք հայտնաբերվել են ընթացիկ ժամանակաշրջանում:

| | | |
|--|---|----------------------------|
|  | PL 61-01 | Էջ 7 / 7 |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | Խմբագրություն: 01 |
| | | Ամսաթիվ: «06» ապրիլ 2010թ. |

7.4.13.2. Էական է համարվում գուտ շահույթի 5 և ավելի տոկոսի չափով սխալը:

7.4.14. **Գլխավոր պահուստ.**

7.4.14.1. Բանկը յուրաքանչյուր տարի հարկումից հետո մնացած շահույթի ոչ պակաս քան, 5%-ն ուղղում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև գլխավոր պահուստի գումարը կհամալրվի կանոնադրական կապիտալի 15%-ից ոչ պակաս չափով:

7.5. Հարկային հաշվառումը

7.5.1. Հարկային հաշվառումը Բանկում տարվում է ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան: